Հաշվետվություն

2017թ-ի նոյեմբերի 20-23-ը Ռուսաստանի Դաշնության Ռյազան քաղաք գործուղման արդյունքների մասին

1. **Անուն ազգանուն**
   Մանվել Հարությունյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Ռուսաստանի Դաշնություն (ք. Ռյազան), 2017թ. նոյեմբերի 20-23-ը

4. **Հրավիրող կողմը**
   ՌԴ արդարադատության նախարարության պատիժների կատարման դաշնային ծառայություն

5. **Գործուղման նպատակը**
   Մասնակցելու «Հանցանք, պատիժ, ուղղում» խորագրով III միջազգային պենիտենցիար ֆորումին:

   Ֆորումի նպատակն է ստեղծել երկխոսությունների միջազգային հարթակ՝ քրեական պատիժների կատարման ոլորտում արդիական գործիքակազմ ընտրելու, միջազգային համագործակցությունն ամրապնդելու, ինչպես նաև քրեակատարողական քաղաքականությունն արդիականացնելու համար:

6. **Քննարկված թեմաները**
   Միջազգային պենիտենցիար ֆորումում քննարկման առարկա էին հանդիսանում.

   Ա) ՌԴ քրեակատարողական ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները,

   Բ) Օտարերկրյա պետությունների քրեակատարողական հիմնարկների աշխատանքների կազմակերպումը,

   Գ) Քրեական պատիժների կատարման ոլորտում առաջավոր փորձի ուսումնասիրությունը,

Scanned by CamScanner

Դ) Քրեակատարողական հիմնարկներում իրականացվող կազմակերպա-իրավական, ինժեներա-տեխնիկական և հոգեբանա-մանկավարժական միջոցառումների արդիականացման հնարավորությունները,

Ե) Քրեական պատիժների կատարման ոլորտում միջազգային համագործակցության ամրապնդումը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ֆորումի լիագումար նիստում ելույթ ունեցան ՌԴ պատիժների կատարման ֆեդերալ ծառայության տնօրեն, գեներալ-գնդապետ Ա.Կորնիենկոն, ծառայության այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, ՌԴ կառավարության և Ռյազանի տարածքային կառավարման ղեկավար ներկայացուցիչներ, դատախազության և դատական համակարգի ներկայացուցիչներ, օտարերկրյա հյուրեր, մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում հեղինակավոր միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի պատվիրակներ և այլ անձիք:

Ներկաներին տեսաուղերձով ողջունեց նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետ, գեներալ-մայոր Ա.Օսիկյանը, ով կարևորելով, երկամյա պարբերականությամբ կազմակերպվող միջազգային պենիտենցիար ֆորումի նշանակությունը, հույս հայտնեց, որ ֆորումի շրջանակներում ընդունված առաջարկություններն ու տեսլականներն արդյունավետ հարթակ կստեղծեն միջազգայի պենիտենցիար համագործակցության զարգացման համար:

Ֆորումի շրջանակներում Մ.Հարությունյանը հյուրընկալվեց ՌԴ ԱՆ պատիժների կատարման դաշնային ծառայության Ռյազանի իրավունքի և կառավարման ակադեմիայի պետ, գեներալ-մայոր Ա.Կրիմովին, որի ընթացքում քննարկվեցին երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Ֆորումի շրջանակներում կազմավորված կլոր սեղաններում քննարկվեցին հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ թեմաներ, ինչպիսիք են՝ քրեական և քրեակատարողական օրենսդրության կատարելագործումը, առանձին պատժատեսակների կիրառման առանձնահատկությունները, վերասոցիալականացման և բժշկական ապահովման աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները և այլն:

Scanned by CamScanner

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ֆորումի շրջանակներում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Ֆորումի արդյունքում ընդունվեցին խորհրդատվական բնույթ կրող առաջարկություններ, որոնք ուղղված են քրեակատարողական օրենսդրության կատարելագործմանը, պենիտենցիար ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը, կադրային արդյունավետ քաղաքականության մշակմանը, քրեակատարողական հիմնարկների կառավարման ոլորտում արդիական գործիքակազմ ներդնելու հնարավորությունների քննարկմանը, ինչպես նաև միջազգային պենիտենցիար համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը:

10. Գործուղվողը

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի տեղակալ, արդարադատության գնդապետ Մանվել Հարությունյան:

11. Ստորագրությունը, ամսաթիվը

«27» հոկտեմբերի 2017թ.

Scanned by CamScanner